ՌԿԶ.

Զերկու փառաւոր եալբս հոռոմոց ի Թառապիայ, և զմի յառնաւուտ գեղն հրամանաւ Թագաւորին քակեցին ի հիմանց, վասն զչափն անցեալ փառաւորութեանն, և վասն չինելոյն ի հալի տեղւոջ ընդդէմ Թագաւորական եասախին։ Եւ զմի հոյակապ նորաշէն բաղանիս ի հիսար նոյնպէս քակեցին ի հիմանց, զի սպանին զոմն սպասաւորք բաղանեացն և ի բաժանելն զինչսն սպանելոյն կռուեցան, և իմացեալ կալան և պատուհասեցին ըստ արժանեացն։ (Հ. Անանիա առ Մելգոնեան, 1767 Յունիսի 14. [Կ. Պոլիս])։

ՌԿԷ.

Նաւիկէլլային առապ մէլքիթներն գնեցին զտուն մի հանդերձ պախչայով ածան գնով, փակար անելով[1] երկու հազարէն պակաս, և եթէ կամիս գիտել զտեղին, կարեմ տալ հասկացուցանել այսպէս, կայ ի գլուխ ճանապարհին որ երթայ ի գօլօսէօն ի յաջակողմանն, հանդերձ շահնիշիրով և բազում պատուհանօք հայեցելովք ի վերայ ճանապարհին։ Եւ այժմ ճուստար կանեն[2] զտունն և ըզպախճան։ (Հ. Գէորգ առ Հ. Մկրտիչ Ան. 1767 հոկ. 24. [Հռովմ])։

ՌԿԸ.

Ի հոկ. 16, ուրբաթ, տաճիկքն վերստին եռուն արզուհալ զտանցն հայոց. և էլ ֆերման. և ըստ ֆէրմանին ի հոկ. 19 ԲՇ.թի ի ղալաթիա մէհկէմէն կոչեցին զդատախազ տաճիկսն, և զհայ տանուտէրսն. և ասեն. հայքն հնազանդին հրամանի թագաւորին մերոյ. և դուք ևս հնազանդիք թէ ոչ, քանզի ֆէրման եղև, զի, տաճիկքն տէյէր փահասընա տացեն զգինս տանցն, և առցեն զտունսն. արդ՝ տա՞յք զգինն տանցն և առնո՞ւք զտունսն, թէ զհեօճէթսն տանցն, տացո՞ւք ցհայ տանուտէրսն։ Իսկ տաճիկքն ոչինչ պատասխանի եռուն. ուստի և եռուն զհեօճէթսն ցհայս։ (Հ. Յակոբոս Զամչ. առ Մելգոնեան, 1767 նոյ. 30. [Կ. Պոլիս])։

ՌԿԹ.

Ճուզէփփէ Սիմոնիս Ասսէմանին որ էր գլքապետն Վաթիկանու, տամլայով հիւանդացաւ, և յետ հնգից և վեցից աւուրց ննջեաց ի տէր։ Եւ յաջորդեաց ի տեղի իւր, Նէփոթն նորա մօնսինեօր Էվոտիոն։ (Հ. Գէորգ Պաղտ. առ Մելգոնեան, 1768 յունվ. 16. [Հռովմ])։

ՌՀ.

Ի փետրվարի 7 փլուցին զմի եկեղեցին հայոց որ է Էլիպ։ Զպատճառն ասեն թէ զի ոչ եռուն Բ ոսկի չօրպաճիին կամ այլում, և նոքա եռուն արզուհալ և եռուն փլուցանել. դեռ զստոյգն չիմացայ։ Եւ ասեն թէ այն եկեղեցին ունի զփէնչէ, սակայն տակաւին փլուցին։ (Հ. Յակ. Զամչ. առ Մելգոնեան, 1768 փետր. 15. [Կ. Պոլիս])։

---

1. Pagare = վճարել։
2. Aggiustare = նորոգել։